ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ք. Գավառ

N 9 - Ա **04 փետրվարի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԵՌԱՎԱԼԵՆՏ ՕՊՊ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻՑ ԵՐԿՎԱԼԵՆՏ ՕՊՊ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.17-րդ կետերի դրույթներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N 3752-Ա հրամանը

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում եռավալենտ ՕՕՊ պատվաստանյութից երկվալենտ ՕՊՊ պատվաստանյութի անցման փուլի գործընթացն ապահովելու համար ստեղծել փաստագրման հանձնաժողով հետևյալ կազմով՝

Պողոսյան Անուշ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, հանձնաժողովի նախագահ
Մանուկյան Ատոմ	- ՀՀ Գեղարքունիքի մարզի գլխավոր մանկաբույժ
Իգիթյան Սաթիկ	- ,,Գավառի պոլիկլինիկա'' ՊՓԲԸ բժիշկ-նյարդաբան
Երիցյան Մանուկ	- ՀՀ Գեղարքունիքի մարզի գլխավոր վարակաբան
Սարգսյան Գոհար	- «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ -ի ՀՀ Գեղարքունիքի մարզային մասնաճյուղի տնօրեն /համաձայնությամբ/
Հարությունյան Հասմիկ	- «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ -ի ՀՀ Գեղարքունիքի մարզային մասնաճյուղի իմունականխարգելման հարցերով պատասխանատու /համաձայնությամբ/:

2. Հանձնաժողովին՝ եռավալենտ ՕՕՊ պատվաստանյութից երկվալենտ ՕՊՊ պատվաստանյութի անցման գործընթացը իրականացնել ըստ փաստագրման հանձնաժողովի գործառույթների՝ համաձայն հավելվածի:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի

2016թ. փետրվարի 4 -ի

N 9 - Ա կարգադրության

ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԵՌԱՎԱԼԵՆՏ ՕՊՊ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻՑ ԵՐԿՎԱԼԵՆՏ ՕՊՊ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԱՆՑՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Համակարգել պոլիոմիելիտի եռավալենտ պատվաստանյութից երկվալենտի անցման և պատվաստումների ազգային օրացույցում ինակտիվացված պոլիոմիելիտի պատվաստանյութի ներդրման միջոցառումները:

2. Աջակցել պոլիոմիելիտի պատվաստումներում ցածր ընդգրկվածության համայնքներում եռավալենտ ՕՊՊ-ով «Մաքրում» միջոցառմանը:

3. Երկու շաբաթը մեկ անգամ գույքագրել եռավալենտ ՕՊՊ-ի մնացորդային քանակությունները մարզում՝ ավելորդ կուտակումից և հետագա խոտանից խուսափելու նպատակով:

4. Ըստ ժամանակացույցի կազմակերպել եռավալենտ ՕՊՊ-ի մնացորդային քանակությունների հետ վերադարձը /հավաքումը/ և երկվալենտ ՕՊՊ-ի բաշխումը:

5. Ապահովել մարզի բոլոր բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում եռավալենտ ՕՊՊ-ից երկվալենտի անցման գործընթացի փաստագրման հաշվետվությունների ներկայացումը «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնին»:

6. Աջակցել եռավալենտ ՕՊՊ-ից երկվալենտ ՕՊՊ-ի անցման և պատվաստումների ազգային օրացույցում ինակտիվացված պոլիոմիելիտի պատվաստանյութի ներդրման դասընթացների կազմակերպմանը:

7. Կազմակերպել խորհրդակցություններ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարների հետ՝ գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունների փոխանակման, ինչպես նաև խնդիրների վերհանման և լուծումների [illegible]ման նպատակով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ